

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 50/2

11 հոկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց քաղաքացի Արմինե Համբարձումյանի 24.09.2013 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման 21.08.2013 թ-ի թիվ 1411339 վարչական ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 21.08.2013 թ-ի թիվ 1411339 վարչական ակտով մասնավորապես արձանագրվել է, որ քաղաքացի Արմինե Համբարձումյանը, բնակվող ք.Երևան, Վ.Փափագյան 17/59 հասցեում, իրականացնում էր օտար լեզուների ուսուցման դասընթացներ՝ չունենալով համապատասխան պետական գրանցում և համաձայն իր բացատրության ստացել է 575000 դրամի եկամուտ: Արդյունքում կիրառվել է ՀՀ հարկերի մասին՝ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված տուգանքը՝ գումարով 287.500 դրամ:

Քաղաքացի Արմինե Համբարձումյանի գանգատում բերված փաստարկները

Դիմումատուն հարկ է համարում նշել, որ այն ժամանակ, երբ Քրիստինեի հետ պարապելու հոժարություն է հայտնել, գտնվել է ծանր առողջական վիճակում: Թոքաբորբի գաղտնի փուլ տանելու հետևանքով ու համապատասխան բուժում չստանալով՝ հիվանդացել է այսպես կոչված <Թաց պլեյրիտ> հիվանդությամբ: Դրանից հետո գանգատում մանրամասն նկարագրվում է հիվանդության և բուժման գործընթացը և ասվում է, որ դրա հետևանքով իր ընտանիքը հայտնվել է ծանր ֆինանսական դրության մեջ: Ըստ Արմինե Համբարձումյանի դիմումի Քրիստինեի հայտվելին իր համար փրկության պես մի բան էր, քանի որ Քրիստինեի հետ օտար լեզու պարապելու միջոցով հնարավորություն կնձեռնվեր գումարներ հայթայթել իր գնալով խորացող առողջական ծանր վիճակը ապաքինելու համար:

Արմինե Համբարձումյանի դիմումի համաձայն, քանի որ առաջին անգամն էր, որ ինքը հայտնվել էր ցուցմունք տվողի կարգավիճակում, ուստի, գտնվելով ուստիկանության անչափահասների գծով քննչական և օպերատիվ-հետախուզական բաժանմունքներում, չափազանց հուզվել է և շփոթվել, այդ պատճառով թերացել է արձանագրել որոշ փաստեր, ինչն անում է հիմա:

Արմինե Համբարձումյանը հայտնում է, որ ինքը Քրիստինեի հոր հետ պայմանավորվածություն է ունեցել, որ վերջինս կհոգա իր բոլոր բուժական ծախսերը, ինչպես նաև սննդի հետ կապված գումարները, իսկ նա էլ իր հերթին պատրաստակամություն է հայտնել ամենայն լրջությամբ և անթերի կերպով փոխանցել իր գիտելիքները, մինչև Քրիստինեն ակադեմիական մակարդակի գիտելիքներ ձեռք կբերի:

Որոշ ժամանակ անց Քրիստինեի հայրը հաշվարկել ու գտել է, որ իր տված գումարն ավելի շատ է եղել և, չբավարարվելով աղջկա՝ իսպաներենին տիրապետելու աստիճանով և տեղեկացված լինելով, որ Արմինե Համբարձումյանը նաև տիրապետում է անգլերենին, պահաջել է, որ որոշ ժամանակ պարապի նաև անգլերեն: Արմինե Համբարձումյանը չի մերժել և ըստ էության դարձել է քմահաճույքի զոհ:

Հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները, Արմինե Համբարձումյանի առողջական ու ֆինանսական վիճակը ու այն, որ իր կողմից արարքը կատարվել է առաջին անգամ, այսինքն՝ իրականացված գործունեությունը չի կրել ապօրինի ձեռնարկատիրության բնույթ, դիմումատուն խնդրում է վերանայել վարչական ակտը:

« ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգադարկման հանձնաժողովի եզրակացությունը

« ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգադարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով քաղաքացի Արմինե Համբարձումյանի և « ԿԱ ՊԵԿ ՕՎՎ պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

« Սահմանադրական դատարանի 25.11.2008 թ-ի թիվ 020.0780 որոշման 7-րդ կետում « Սահմանադրական դատարանի կողմից բացահայտվել է <ձեռնարկատիրական գործունեություն> հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանը: Որոշման մեջ « Սահմանադրական դատարանը նշել է, որ տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Այնուհետև հղում կատարելով « քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածին նշել է, որ ձեռնարկատիրական գործունեության, որպես տնտեսական առանձին գործունեության, բովանդակության իրավական բնորոշումից բխում է, որ այն անձի՝ ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունն է, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

« օրենսդրության վերլուծությունը միաժամանակ վկայում է, որ <ձեռնարկատիրական գործունեություն> հասկացության բովանդակությանը բացահայտված է նաև «Հարկերի մասին» « օրենքի 26-րդ հոդվածով:

Նշված օրենքներում <ձեռնարկատիրական գործունեություն> հասկացության վերաբերյալ դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ այդ հասկացությունն ունի հետևյալ հատկանիշները.

- հանդիսանում է տնտեսական գործունեություն,
- հետապնդում է շահույթ /եկամուտ/ ստանալու նպատակ,
- իրականացվում է ինքնուրույն և իր ռիսկով,
- իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց,
- ենթակա է պետական գրանցման /առանձին դեպքերում՝ նաև լիցենզավորման/,
- չի ներառում քաղաքացիների անձնական գույքի /ներառյալ նաև անշարժ/ և իրերի օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- իրականացվում է պարբերաբար:

Հարկ է նշել, որ <ձեռնարկատիրական գործունեության> հասկացությունը նման ձևով է մեկնաբանել նաև « Վճռաբեկ դատարանն իր թիվ 1161(ՏԴ) քաղաքացիական գործով 01.08.2007 թվականի որոշմամբ: Մասնավորապես, նշված որոշման մեջ « Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

<Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացու կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս, անհրաժեշտ է օրենքով սահմանված պարտադիր հատկանիշների առկայությունը որոշել մասնավորապես հետևյալ հանգամանքները բացահայտելուց հետո.

1. արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,
2. արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,
3. արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,
4. արդյո՞ք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի է համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ

արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, ապրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը,

5. արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին,

6. այլ առանձնահատուկ հատկանիշներ>:

Վերոգրյալից հետևում է, որ անձի գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար անհրաժեշտ է որպեսզի դրանում առկա լինեն ՀՀ Սահմանադրական դատարանի 25.11.2008 թ-ի թիվ 020.0780 և ՀՀ վճռաբեկ դատարանի 01.08.2007 թ-ի որոշումներում հիշատակված բոլոր հանգամանքները:

Հանձնաժողովի համոզմամբ, սույն գործի վերաբերյալ որոշում ընդունելիս հարկ է հատկապես հաշվի առնել այն հանգամանքը, որ Արմինե Համբարձումյանի իրականացված գործունեությունը չի կրել պարբերական բնույթ, ինչը հաստատվում է գործում առկա նյութերով: Այսինքն, վարչական վարույթի ընթացքում չի արձանագրվել Արմինե Համբարձումյանի կողմից նման գործունեություն իրականացնելու որևէ այլ փաստ:

Բացի այդ, քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Արմինե Համբարձումյանն ինքնուրույն և իր ռիսկով, հատուցման դիմաց իրականացրել է դասուսուցչի գործունեություն, սակայն գործում եղած ապացույցները հիմնավորում են այն փաստը, որ այդ գործունեությունն ի սկզբանե իրականացվել է ոչ թե հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով, այլ գումարներ հայթայթելու իր օրեցօր վատթարացող առողջական վիճակը կարգավորելու համար:


Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ քննարկվող դեպքում Արմինե Համբարձումյանի կողմից իրականացված գործունեությունը պարբերական բնույթ չկրելու հանգամանքը, ըստ էության, հիմք է տալիս եզրահանգման համար, որ առկա չեն բավարար հիմքեր այն որպես ձեռնարկատիրական գործունեություն որակելու համար: Այսինքն, վարչական վարույթի ընթացքում չի հիմնավորվել Արմինե Համբարձումյանի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փաստը: Հետևապես, նման պայմաններում առկա չեն բավարար հիմքեր «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված տուգանքը կիրառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման 21.08.2013 թ-ի թիվ 1411339 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ